## 2. ԽՈՓԱՅԻ ՇՐՋԱՆ

Ծովեզրյա այս շրջանը գտնվում է Թուրքիայի՝ նախկին Տրապիզոնի նահանգի Լազիստան գավառում (այժմ՝ Ռիզեի նահանգ)՝ Խոփա կենտրոնով։ Շրջանն արևելքից սահմանակից է Սնղրկովկասին (Բաթումի շրջան), արևմուտքից՝ Աթինայի և Համշենի շրջաններին։ Բռնի կերպով մահմեդականություն առերես ընդունած համշենահայերի այս հատվածի (խոփա-համշենցիների) նախնիները հոծ զանգվածներով այս կողմերն են գաղթում հատկապես XVII դ. երկրորդ կեսից սկսած։

Առաջին համաշխարհային պատերազմից ու Ռուսաստանում քաղաքացիական կռիվներից հետո, Սովետական Միության և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի համաձայն, Խոփայի շրջանի մահմեդականացած համշենահայերի բնակավայրերի մեծագույն մասը Խոփա կենտրոնով մնաց թուրքական սահմանում և միայն մի քանի գյուղեր՝ սովետական սահմանում (Բաթումի շրջան), որոնք հետևյալներն են.

Գըզըլ-թափրաքը գտնվում է Բաթումից 4 ժամ հեռու, Ճորոխ գետի արևմտյան ծովափնյա երկրամասում։ Բնակիչները 20 տուն մահմեդականացած համշենահայեր ու շուրջ 80 տուն քրդեր են։

Չարճալին կամ Ճառճալը Գըզըլ-Թոփրաքից հարավ, խիստ լեռնային գյուղ է, 30 տուն մահմեդականացած համշենահայեր՝ Գարաքչի-օղլի, Քյոս-օղլի, Ֆեյզ-օղլի, Միլիշ-օղլի, Դավիթ-օղլի և այլ ազգատոհմերից։ Գարաք-օղլի Իբրահիմի վկայությամբ, իրենց նախնիները կոչվել են Գարաքյաններ, իսկ քյոսօղլիները՝ Քյոսյան, դավիթօղլիները՝ Դավիթյան և այլն։

Գաճիռ: Գըզըլ-Թոփրաքից դեպի Խոփա լեռնային, մահմեդականացած համշենահայերի գյուղ է, 50 տուն բնակչությամբ, մեծ մասը Գարարաչաք-օղլի, Մարաշ-օղլի, Տարաիբրահիմ-օղլի ազգատոհմերից։

Գարաիբրահիմ-օղլի Իսակի ու նրա հորեղբայր 80-ամյա Ահմեդի վկայությամբ, նրանց նախնիները Ճերմակյան են կոչվել ու մինչև այսօր էլ համագյուղացիք նրանց ճերմակցի են անվանում։

Սորիաք: Գոնիոյին հարավից սահմանակից գյուղ, ուներ 30 տուն բնակչություն՝ Թաթար-օղլի, Թանթ-օղլի, Սալեհ-օղլի և այլ ազգատոհմերից։

Ավֆա: Կորիաթին սահմանակից փոքր գյուղ, 8 տուն բնակչությամբ, Ալբոյուք-օղլի, Սարխոշ-օղլի ազգատոհմերից։

Թուրքիայի Խոփե գավառակում, Ճորոխի ձախ ափին և ծովեզերքում գտնվում են մահմեդականացած համշենահայերի հետևյալ գյուղերը[8]։

Սարփ: Գոնիոյից արևելք, սահմանային գյուղ է, որի մի մասը գտնվում է Սովետական Միությունում։ Գյուղի բնակչության մեծամասնությունը լազեր են, մի թաղը՝ 18 տուն մահմեդականացած համշենահայեր։

Մաքրիալ: Գոնիոյից հարավ, ծովափնյա, մահմեդականացած համշենահայերի գյուղ, ուներ 50 տուն բնակչություն։

Շռնա (Շանա): Լեռնային գյուղ Սարփից հարավ-արևելք, որն ուներ 30 տուն բնակչություն, ամբողջությամբ մահմեդականացած համշենահայեր։

Ուչ-գարդաշ: Մաքրիալից հարավ-արևելք, ծովափնյա, մահմեդականացած համշենահայերի գյուղ, 20 տուն բնակչությամբ։ Ուչ-Գարդաշ (երեք եղբայր) անունը ստացել է ծովափում, իրար մոտ երեք խոշոր քարաժայռեր գտնվելու պատճառով։

Չարշախանա: Մաքրիալից հարավ-արևելք, մահմեդականացած հայերի գյուղ, 25 տուն բնակչությամբ։

Մալին-օղլու-գեղը: Ուներ 30 տուն բնակչություն. գյուղը գտնվում է Մաքրիալից հարավ-արևելք։

Քյուիրինի: Գյուղ Մալին-օղլիից հարավ, Ճորոխի ձախ ափին, որն ուներ շուրջ 55 տուն բնակչություն։

Խոփայից շուրջ երկու ժամ հարավ իրար հաջորդում էին մահմեդականացած համշենահայերի հետևյալ գյուղերը՝ Չավուշլի (50 տուն), Չուրպիջի (30 տուն), Սիկլի (40 տուն), Ջոյանա (55 տուն), Կըլըճուռ (45 տուն)։ Խոփա քաղաքից հարավ-արևմուտք գտնվում են ծովեզրյա կամ իրար սահմանակից մահմեդական համշենահայերի Ղալղինա (40 տուն), Կարչի (50 տուն), Օճճուռուա (30 տուն), Ճոկոպլիք, Պայի գյուղերը, ինչպես նաև Արտաշեն ծովեզրյա ավանը։ Խոփա քաղաքում բնակվում էին շուրջ 50 տուն մահմեդական համշենահայեր, որոնք զբաղվում էին առևտրով և արհեստով։ Առհասարակ, Խոփա քաղաքում ու շրջանում մեծ մասամբ բնակվում են մահմեդականացած լազեր։

Այսպիսով, եթե համշենահայերի ծովեզերյա վերջին հանգրվանը հնում եղել էր Աթինայի մոտ՝ Արտաշեն ավանը, ապա մահմեդականացած համշենահայերն այդ կետը հասցրին Ճորոխի գետաբերանը՝ Բաթումի մոտ։

Թուրքիայի ներկա վարչական բաժանմամբ, Խոփե գավառակը մտնում է Արդվինի նահանգի

[8] Բնակչության թիվը 1940 թ. իմ կողմից հավաքած տվյալներով (Բ. Թ.)։

մեջ, որտեղ մահմեդականացած համշենահայերի ստվար մի հատված մինչև այսօր պահպանել է մայրենի լեզուն ու բարբառը և կոչվում է «խոփէ-համշինցի»։

Հետաքրքիր զուգադիպություն է նաև երկու Շանա (Շոնա) գյուղերի առկայությունը՝ մեկը Խոփայի մոտ, որը հիմնել են մահմեդական խոփահամշենցիք, երկրորդը՝ Տրապիզոնի մոտ՝ համշենահայերի գյուղը։ Արդյոք այդ երկու հատվածների նախնիները չե՞ն հեռացել բուն Համշենում գոյություն ունեցող Կոշանա գյուղից (համա.՝ Կոշանա—Շանա—Շոնա)։

## 3. ՍՅՈՒՐՄԵՆԵ ԿԱՄ ՍԵՎ-ԳԵՏ ԳԱՎԱՌԱԿ

Գտնվում է Տրապիզոնի ու Ռիզեի գավառների միջև, Սև ու Յոմպոլի գետերի միջև ընկած լեռնաշխարհում։ Սահմաններն են՝ հյուսիսից Սև ծովը, արևելքից՝ մահմեդականացած հույների Օֆ գավառակը։ Հարավարևելյան լեռնային ճանապարհներով ու արահետներով կապված է Համշենի գավառի հետ, հարավում Պոնտական լեռնաշղթայով բաժանված է Բաբերդի բարձրավանդակից, հարավ-արևմուտքում գտնվում է Սանգա հունական գյուղախումբը, իսկ արևմուտքում՝ Յոմուրայի վիճակը։ Այս շրջանը նույնպես համատարած լեռնաշխարհ է՝ մեծ ու փոքր բլուրներով և անդնդախոր ձորերով։ Մշակվող հողերը զբաղեցնում են մակերեսի 20—30%։ Ծովափնյա ու միջին գոտիները ծածկված են փարթամ բուսականությամբ ու խոր ձորերով։ Անտառների իշխողը երկինք խոյացած սոճիի ծառերն են։ Հարուստ է նաև հասարակ վայրի կաղնու, խոզկաղնու, մոշմորքի, ինչպես և լաստենու, հացենու, մոնու (նշտարենի) և այլ ծառերով ու թփերով։ Բարձրադիր վայրերում համատարած զանգվածներ են կազմում փշատերև ծառերը՝ եղևնի, մայրի։ Հսկա ծառերի շվաքներում ու առանձին հատվածներում պերճությամբ աճում են թանկարժեք տոսախի, մշտադալար լաշենու, ծվաղի և բազմաթիվ այլ տունկեր ու մագլցող բույսեր։ Անտառային գոտու հարևանությամբ տարածվում են սիզավետ լեռնային արոտավայրերը։ Անտառները, մանավանդ նրանց միջին ու ներքին լեռնափեշերը, հարուստ են պտղատու ծառերով՝ տանձ, խնձոր, կեռաս, բալ, սալոր, վայրի ծվաղ, զրզըր, հոն, ինչպես նաև՝ զանազան սնկատեսակներով։

Վայրի կենդանիներից տարածված են՝ գայլը, արջը, վարազը, շնագայլը, քարայծը. ճագար պատահում է ամեն տեղ։

Գավառակի գետերից ամենաջրառատը՝ Սևգետը (Գարա-դերե) սնվում է Պարխարյան (Պոնտական) լեռների հյուսիսային բարձունքներից ու մինչև ծովափից երկու ժամ հեռու՝ Սողնաս գյուղը, ոլորապտույտ սլանում խոր ձորերի ու կիրճերի միջով, մնացյալ ընթացքում նավարկելի է և Սյուրմենե ավանի մոտ թափվում է Սև ծովը։ Փոթորիկների ժամանակ գետաբերանը լավ ապաստան է փոքր նավակների համար։ Յամպոլի գետի ակունքները սկիզբ են առնում Բաբերդի սահմանների մոտ գտնվող Տաշքյոփրի ու Յաղմուր-տերե լեռներից ու արագահոս անցնելով հունաբնակ Սանղա, ապա մահմեդականացած հայերի մարգաշատ գյուղերի (Իշխանելի, Աղրիտ, Սիմոնա և այլն) միջով՝ Սյուրմենեի արևմուտքում, Յալկոզ կոչված վայրում թափվում ծովը։ Այս երկու գետերն իրենց ամբողջ ընթացքում ընդունում են բազմաթիվ մեծ ու փոքր վտակներ։ Սրանց ջրերում առատ բազմանում է քաղցրահամ կարմրախայտ ձուկը։

Յամպոլի գետի ընթացքով անցնում էր Բաբերդը Սև ծովին միացնող ամենակարճ ու հարմարավետ ճանապարհը։ Գետի վերին մասերում գտնվող Յաղմուր-տերեի շրջանը երբեք եզակի մի երկրամաս էր, որտեղ մինչև մեր օրերը (1900-ական թթ.) ազգային ինքնուրույնությունը պահել էին պատմական խալգ (խալտ) ժողովրդի համախումբ սերունդները։

Սյուրմենե ավանն ունի հարմարավետ ծովախորշ-նավահանգիստ, ուր ապաստանում էին ձկնորսական և այլ առագաստանավեր ու նավակներ։

Երկիրը առատ է մթնոլորտային տեղումներով։ Ծովափնյա, մերձարևադարձային կլիման դեպի հարավ աստիճանաբար փոխվում է բարեխառնի, ապա լեռնոտ վայրերում՝ ցամաքայինի։ Ձյան հաստ շերտը ձմռանը օրերով անմատչելի էր դարձնում այս վայրերը։

Սյուրմենահայերը համարյա ամբողջությամբ սեփական հողամասեր ունեին, որի շնորհիվ իրավունք ունեին նաև տների մեծ մասը քարաշեն կամ կիսաքարաշեն կառուցելու։ Սեփականություն ունենալը նրանց հնարավորություն էր տվել նաև հիմնական տնտեսություն ունենալու՝ կաղինի այգիներ, պտղատու ծառեր, տնամերձ են։

Գրեթե բոլոր գյուղերում գլխավոր ու շահութաբեր զբաղմունքը կաղնու այգիների, պտղատու ծառերի (տանձ, խնձոր, սալոր, կեռաս, ծվաղ և այլն) մշակումն էր, որը հիմնականում սեփական կարիքները բավարարելու համար էր։

Հացահատիկներից մշակում էին հիմնականում լազուտ (եգիպտացորեն), մասամբ նաև՝ ցորեն, գարի, հաճար. վերջիններս ցանում էին «բերանափոխի» նպատակով՝ համեղ ձավարեղեն ու քաղցրեղեն պատրաստելու համար։ Ցորենի ալա-